ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՏԻԿԻՆ ԳԱՅԱՆԵ ՄԵԼՔՈՄ ՄԵԼՔՈՄՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Մելքոմ Մելքոմյան.

Ի պատասխան Ձեր 03.12.2018թ. 01/23 գրության՝ տեղեկացվում է.

1. «Երևանի ավտոբուս» ՓԲ ընկերության բոլոր աշխատակիցները՝ ներառյալ ընկերության կողմից սպասարկվող երթուղիների ավտոբուսների վարորդները, հաստիքային աշխատողներ են, որոնք աշխատանքի են ընդունվում կողմերի միջև կնքված աշխատանքային պայմանագրով: Ավտոբուսների վարորդների ամսական աշխատավարձը հաշվարկվում է համաձայն Երևանի քաղաքապետի 2017 թվականի դեկտեմբերի 28-ի հ.4871-Ա որոշմամբ հաստատված հաստիքացուցակի սահմանված ժամավճարային հիմունքներով՝ 1 ժամը-467.4 ՀՀ դրամ հաշվարկային չափով:

2. Ղեկավարվելով Երևանի քաղաքապետի 30.03.2012թ. հ.2911-Ա որոշման պահանջներով, ընկերության կողմից սպասարկվող երթուղիներում պարբերաբար իրականացվում է ուղևորահոսքի ուսումնասիրություններ և ըստ երթուղիների՝ հաստատում համապատասխան հասույթի պլաններ, պայմանավորված աշխատանքային, շաբաթ և կիրակի օրերի, ինչպես նաև սեզոնային (եղանակային) առանձնահատկություններով, որն ամենօրյա կտրվածքով մուտքագրվում է հասույթի դրամարկղ՝ ըստ փաստացի կատարված երթերի քանակի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ